

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջև Հայաստանի Հանրապետությունում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կարգավիճակի մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ), այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով օգնություն ցուցաբերելու և մարդկային տառապանքները թեթևացնելու գործում ԿԽՄԿ-ի աշխատանքը, ինչպես նաև նրա ավանդը աշխարհում խաղաղության պահպանության գործում,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության շահերը և ԿԽՄԿ-ի կողմից արտահայտված ցանկությունը՝ Երևանում ներկայացուցչություն հիմնադրել 1949 թվականի ժնկի կոնվենցիաներով և 1977 թվականի լրացուցիչ արձանագրություններով, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման կանոնադրություններով ԿԽՄԿ-ի վրա դրված խնդիրների իրականացման համար,

ձգտելով բարենպաստ պայմաններ ստեղծել Հայաստանի Հանրապետությունում այդ խնդիրների իրականացմանն ուղղված ԿԽՄԿ-ի գործունեության համար,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

#### ԿԽՄԿ-ի կարգավիճակը

ԿԽՄԿ-ի կարգավիճակը համատեղելի է միջկառավարական կազմակերպությունների կարգավիճակին:

### Հոդված 2

#### ԿԽՄԿ-ի իրավասությունները

ԿԽՄԿ-ն համարվում է իրավաբանական անձ: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է, որ ԿԽՄԿ-ն իրավունք ունի պայմանագրերով պարտավորություններ ստանձնել, դատական հայցեր հարուցել, իրավունքներ ստանալ, ինչպես նաև ձեռք բերել և տնօրինել շարժական և անշարժ գույք:

### Հոդված 3

ԿԽՄԿ-ի, նրա սեփականության և գույքի անձեռնմխելիությունը

ԿԽՄԿ-ն, նրա սեփականությունն ու գույքը, որտեղ էլ որ գտնվեն և ուն կողմից էլ որ օգտագործվեն, ունեն դատական և վարչական անձեռնմխելիություն, բացառությամբ այն մասնավոր դեպքերի, երբ ԿԽՄԿ-ն որոշակիորեն հրաժարվում է այդպիսի անձեռնմխելիությունից:

#### Հոդված 4

ԿԽՄԿ-ի շենքերի, սեփականության և գույքի անձեռնմխելիությունը

ԿԽՄԿ-ի շենքերը անձեռնմխելի են: ԿԽՄԿ-ի սեփականությունը և գույքը, որտեղ էլ որ գտնվեն և ուն կողմից էլ որ օգտագործվեն, ենթակա չեն խուզարկության, բռնագրավման, առգրավման, սեփականագրկման և որևէ այլ միջամտության՝ լինեն դրանք գործադիր, դատական, վարչական, թե օրենսդրական գործողություններ:

#### Հոդված 5

ԿԽՄԿ-ի արխիվների անձեռնմխելիությունը

ԿԽՄԿ-ի արխիվները և նրան պատկանող կամ նրա կողմից պահվող բոլոր փաստաթղթերը անձեռնմխելի են՝ անկախ դրանք գտնվելու վայրից:

#### Հոդված 6

ԿԽՄԿ-ի հաղորդակցության միջոցները

1. ԿԽՄԿ-ն ազատ է առանց կողմնակի միջամտության պաշտոնական նպատակներով օգտագործել հաղորդակցության այնպիսի միջոցներ, որոնք նա ամենահարմարն է համարում իր կապերն իրականացնելու համար, մասնավորապես, ժնկում ԿԽՄԿ-ի կենտրոնատեղիի հետ, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների, կառավարական կառույցների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ:

2. ԿԽՄԿ-ն, մասնավորապես, իրավունք ունի, Հայաստանի Հանրապետության իրավասու իշխանությունների թույլտվությամբ, իր շենքերում տեղակայել ռադիոհաղորդակցության սարքավորումներ և օգտագործել շարժական սարքեր պետական տարածքի ներսում. նա ազատվում է արտոնագրային գանձումներից, ինչպես նաև բոլոր այլ գանձումներից և վճարումներից: ԿԽՄԿ-ն օգտագործում է պետական իրավասու մարմինների կողմից իրեն այս նպատակի համար հատկացված հաճախականությունները՝ համաձայն

Էլեկտրակապի միջազգային միության կոնֆերանսի թիվ 10 որոշման (CAMR 1979):

3. Պաշտոնական կապին վերաբերող բոլոր հարցերում ԿԽՄԿ-ն օգտվում է դիվանագիտական ներկայացուցչություններին տրամադրվող և ոչ պակաս բարենպաստ վերաբերմունքից առաջնահերթության, տարիֆների և գանձումների հարցում:

#### Հոդված 7

##### ԿԽՄԿ-ի ֆինանսական ռեսուրսները

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրավունք է վերապահում ԿԽՄԿ-ին իր գործունեությունն իրականացնելիս տնօրինել ազգային կամ արտասահմանյան տարադրամ և այլ ֆինանսական միջոցներ, ինչպես նաև հաշիվներ բացել ցանկացած տարադրամով՝ առանց ենթակա լինելու դրամական փոխանակումը և դրան առնչվող այլ հարցերը կարգավորող օրենքներին և կանոններին:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրավունք է վերապահում ԿԽՄԿ-ին իր գործունեությունն իրականացնելիս անարգել փոխանցումներ կատարել ազգային կամ արտասահմանյան տարադրամով երկրի ներսում կամ երկրից դուրս, ինչպես նաև իր միջոցներն ազատորեն փոխարկել այլ տարադրամների:

#### Հոդված 8

##### Հարկերից ազատումը

1. ԿԽՄԿ-ն և նրա միջոցները, եկամուտներն ու սեփականությունը ազատվում են բոլոր ուղղակի հարկերից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հարկերը հանդիսանում են կենցաղային սպասարկման համար վարձ:

2. ԿԽՄԿ-ն ազատվում է պաշտոնական օգտագործման նպատակով խոշոր գնումների համար ամեն տեսակի անուղղակի հարկերից, ինչպես նաև այն ապրանքների գնման հարկերից, որոնք նախատեսված են երկրի ներսում կամ այլ երկրում ԿԽՄԿ-ի օգնության ծրագրերի համար:

#### Հոդված 9

##### Մաքսատուրքերից ազատումը

1. ԿԽՄԿ-ն ազատվում է մաքսատուրքից կամ այլ համարժեք գանձումներից, ինչպես նաև պաշտոնական օգտագործման համար և Հայաստանի ներսում կամ մեկ այլ երկրում ԿԽՄԿ-ի օգնության

ծրագրերի համար նախատեսված ապրանքների ներմուծման, արտահանման կամ Հայաստանի տարածքով դրանց փոխանցման սահմանափակումներից և արգելքներից:

2. ԿԽՄԿ-ն, մասնավորապես, ազատվում է Հայաստան բերվող կամ նրա տարածքով օգնության բեռների օդային փոխադրման և վայրէջքի վճարումներից:

## Հոդված 10

### Պատվիրակության անդամների կարգավիճակը

1. ԿԽՄԿ-ի պատվիրակության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չհանդիսացող անդամները և նրանց ընտանիքները ունեն միևնույն կարգավիճակը, ինչ որ տրված է Հայաստանի Հանրապետությունում ներկայացված միջազգային միջկառավարական կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չհանդիսացող աշխատակիցներին:

2. Նրանք օգտվում են ձերբակալման կամ ազատագրկման անձեռնմխելիությունից, անձնական ուղեբեռի վրա կալանք դնելու, ինչպես նաև, անգամ պատվիրակությունում ծառայությունը թողնելուց հետո, իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս ամբողջ ասածի, գրածի կամ կատարածի համար դատական լիակատար անձեռնմխելիությունից:

3. Նրանց անձնական բնակավայրը, մեքենաները, փաստաթղթերը, ձեռագրերն ու բոլոր այլ անձնական իրերը անձեռնմխելի են:

4. Պատվիրակության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չհանդիսացող անդամների և նրանց ընտանիքների վրա չի տարածվում օտարերկրացիների վերաբնակեցման, գրանցման և պետական ծառայողական պարտավորության որևէ սահմանափակում:

5. Իրենց պաշտոնները ստանձնելիս պատվիրակության Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չհանդիսացող անդամները իրավունք ունեն իրենց անձնական ունեցվածքը ներմուծել առանց մաքսատուրքի: Յուրաքանչյուր անդամ իրավունք ունի առանց մաքսատուրքի կամ որևէ այլ գանձման ներմուծել նաև անձնական օգտագործման փոխադրամիջոց: Հարկերից նրանք ազատվում են նաև հետ վերադառնալիս:

6. Պատվիրակության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չհանդիսացող անդամները իրավունք ունեն վաճառել իրենց անձնական իրերը Հայաստանի Հանրապետության տարածքում միևնույն պայմաններով, ինչ որ ընձեռված է Հայաստանի Հանրապետությունում ներկայացված միջազգային

միջկառավարական  
Հանրապետության  
աշխատակիցներին:

կազմակերպությունների՝  
քաղաքացիներ

Հայաստանի  
չհանդիսացող

7. Ներքին խռովությունների կամ միջազգային բախման դեպքում պատվիրակության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չհանդիսացող անդամները և նրանց հարազատները անհրաժեշտ հնարավորություն են ստանում հեռանալու երկրից, եթե դա ցանկանում են, այն միջոցներով, որոնք նրանք ամենաապահովն ու ամենաարագն են համարում:

8. Պատվիրակության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չհանդիսացող անդամները տարադրամի փոխանակման հարցում օգտվում են այնպիսի արտոնություններից, ինչպիսիք տրվում են Հայաստանի Հանրապետությունում ներկայացված միջազգային միջկառավարական կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չհանդիսացող աշխատակիցներին:

9. Պատվիրակության Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չհանդիսացող անդամներն ազատվում են ԿԽՄԿ-ի կողմից վճարվող կամ ընդհանրապես արտասահմանից նրանց ստացած աշխատավարձի և այլ պարզևատրության հարկերից:

10. Ի լրումն վերոհիշյալ արտոնությունների և անձեռնմխելիության, ԿԽՄԿ-ի պատվիրակության ղեկավարը, նրա տեղակալը, եթե կատարում է ղեկավարի պարտականությունները, և նրանց ընտանիքները օգտվում են նույն կարգավիճակից, որը, ըստ 1961 թվականի ապրիլի 16-ի «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի, տրվում է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներին:

11. Պատվիրակության այն անդամները, որոնք Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, չեն օգտվում այն անձեռնմխելիությունից, արտոնություններից և առավելություններից, որոնք թվարկված են 1-9-րդ կետերում, բացի այն գործողություններին առնչվող դատավարության նկատմամբ անձեռնմխելիությունից, որոնք կատարել են իրենց պարտականությունները իրականացնելիս:

12. Պատվիրակությունը իրավասու իշխանություններին նախապես տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությունում աշխատող անձնակազմի ժամանելու և երկրից մեկնելու, ինչպես նաև նրանց պաշտոնների և պարտականությունների մասին:

13. Պատվիրակության անդամները պարտավորվում են հարգել Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներն ու կանոնները երկիր ժամանելու պահից և կարող են օգտվել դրանց պաշտպանությունից:

## Հոդված 11

ժամանակավոր հանձնարարությամբ ժամանած ԿԽՄԿ-ի ներկայացուցիչները

ժամանակավոր հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետություն ժամանած ԿԽՄԿ-ի ներկայացուցիչները օգտվում են 10-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ կետերում շարադրված արտոնություններից և անձեռնմխելիություններից:

## Հոդված 12

Համագործակցությունը Հայաստանի Հանրապետության հետ

1. ԿԽՄԿ-ն մշտապես համագործակցում է իշխանությունների հետ սույն Համաձայնագրով նախատեսված արտոնությունների, անձեռնմխելիության և առավելությունների չարաշահման ցանկացած ձևի կանխարգելման նպատակով:

2. ԿԽՄԿ-ն կարող է ցանկացած դեպքում հրաժարվել իր պատվիրակության որևէ անդամին ընձեռած անձեռնմխելիությունից, եթե, իր կարծիքով, այդ անձեռնմխելիությունը կարող է խոչընդոտել արդարադատության իրականացմանը. դրանից կարելի է հրաժարվել առանց ԿԽՄԿ-ի շահերին վնաս հասցնելու:

## Հոդված 13

Ոչ ցանկալի անձնավորություն հայտարարելը

Հայաստանի Հանրապետությունը կարող է ցանկացած ժամանակ և առանց իր որոշումը բացատրելու ծանուցել ԿԽՄԿ-ին, որ ներկայացուցչության որևէ անդամ, որն օգտվում է անձեռնմխելիությունից, ոչ ցանկալի անձնավորություն է կամ ընդունելի չէ համաձայն այն պայմանների և այն հետևանքներով, որոնք շարադրված են 1961 թվականի ապրիլի 16-ի «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայում: Նման հայտարարությունը պետք է արտաքին գործերի նախարարության կողմից հասցեագրված լինի ներկայացուցչության ղեկավարին, եթե անձնավորությունը, որի մասին խոսքովում է, ներկայացուցչության անդամ է, իսկ եթե նա ներկայացուցչության ղեկավարն է կամ ԿԽՄԿ-ի որևէ այլ ներկայացուցիչ, որը չի հանդիսանում ներկայացուցչության անդամ, ապա ԿԽՄԿ-ի կենտրոնատեղի՝ ժնև:

## Հոդված 14

Մեկնաբանումը

Սույն Համաձայնագիրը պետք է մեկնաբանել նրա հիմնական նպատակների լույսի ներքո, որոնք կոչված են ԿԽՄԿ-ին հնարավորություն ընձեռել լիովին և արդյունավետորեն կատարելու իր գործառնությունները, ստանձնելու իր պարտականությունները և իրականացնելու իր ծրագրերը:

#### Հոդված 15

Տարածայնությունների կարգավորումը բանակցությունների միջոցով

1. Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված Հայաստանի Հանրապետության և ԿԽՄԿ-ի միջև ծագած ցանկացած տարածայնություն Կողմերի միջև կարգավորվում է բանակցությունների միջոցով:

2. Սույն Համաձայնագրի Կողմերը հաշվի են առնում Հայաստանի Հանրապետության պետական շահերը և ԿԽՄԿ-ի շահերը այն բանում, ինչը վերաբերում է նրա գործունեությանը: Նրանք կանեն ամեն հնարավորը, որպեսզի տարածայնությունները հարթվեն բարի կամքի և իրավահավասարության ոգով, ինչպես նաև շրջահայացությամբ, որն էական է Հայաստանի Հանրապետության և ԿԽՄԿ-ի միջև լավ հարաբերությունների պահպանման համար:

#### Հոդված 16

Արբիտրաժ

Եթե վերոհիշյալ բանակցությունները անհաջողություն են կրում, տարածայնությունները վերջնական որոշման համար ներկայացվում են երեք միջնորդ դատավորից կազմված միջնորդ դատարան, որոնցից մեկը նշանակվում է ԿԽՄԿ-ի նախագահի կողմից, մյուսը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, երրորդը՝ երկուսի կողմից, իսկ նրանց միջև համաձայնության բացակայության դեպքում՝ Միջազգային դատարանի նախագահի կողմից: Միջնորդ դատարանը ինքն է կարգավորում իր ընթացակարգը և աշխատակարգը: Այդ դատարանի որոշումը համարվում է վերջնական:

#### Հոդված 17

Սույն Համաձայնագրի մեջ ուղղումներ կատարելը

Սույն Համաձայնագրի դրույթների մեջ ցանկացած ժամանակ կարելի է ուղղումներ կատարել երկու Կողմերի համաձայնությամբ:

#### Հոդված 18

## Լրացուցիչ համաձայնագրեր

Հայաստանի Հանրապետությունը և ԿԽՄԿ-ն կարող են համաձայնել լրացուցիչ համաձայնագրեր կնքելու մասին:

### Հոդված 19 Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրը, միջազգային պայմանագրերի համաձայն, ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

### Հոդված 20 Չեղյալ հայտարարելը

Հայաստանի Հանրապետությունը և ԿԽՄԿ-ն կարող են չեղյալ հայտարարել սույն Համաձայնագիրը՝ մյուս Կողմին այդ մասին տեղյակ պահելով առնվազն 6 ամիս առաջ, որից հետո սույն Համաձայնագիրը դադարում է ուժի մեջ լինելուց:

Կատարված է Երևան քաղաքում 1993 թվականի նոյեմբերի 5-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ֆրանսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:



## Արձանագրություն

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջև Հայաստանի Հանրապետությունում ԿԽՄԿ-ի կարգավիճակի մասին Համաձայնագրում» փոփոխություն կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Կարմիր խաչի միջազգային կոմիտեն, այսուհետև՝ կողմեր,

նկատի ունենալով այն փաստը, որ 1993 թվականի նոյեմբերի 5-ին Երևանում ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջև Հայաստանի Հանրապետությունում ԿԽՄԿ-ի կարգավիճակի մասին Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/, իր 19-րդ հոդվածի համաձայն, ուժի մեջ է մտել ստորագրման պահից,

հաշվի առնելով Համաձայնագրին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ներկայացվող պահանջները, ելնելով Համաձայնագրի 17-րդ հոդվածից,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Կողմերը կնքում են սույն Արձանագրությունը Համաձայնագրի մի շարք դրույթներ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

### Հոդված 2

Սույն Արձանագրության նպատակն է փոփոխել Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգը:

### Հոդված 3

Կողմերը համաձայնեցին, որ, առանց վիճարկելու Համաձայնագրի նպատակը, բովանդակությունը և դրանից բխող իրավունքները և պարտականությունները, հայկական Կողմը կվերահաստատի սույն Արձանագրությամբ փոփոխված Համաձայնագրի կիրառումը՝ ԿԽՄԿ-ին Համաձայնագրի և սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող ընթացակարգերի կատարման մասին ծանուցման միջոցով:

#### Հոդված 4

Սույն Արձանագրությունը Համաձայնագրի անբաժանելի մասն է:

Կատարված է Երևան քաղաքում 2000 թվականի հուլիսի 19-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ֆրանսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրը և Արձանագրությունը ուժի մեջ են մտել 2001 թվականի մայիսի 31-ից: